ԸՆԴՈՒՆԵԼՈՒԹՅՈՒՆՆԵՐ ՄԵԾԲ ԷՋՄԻԱԾՆ

ՕՇԱԿԱՆՈՒՄ ԿԿԱՌՈՒՑՎԻ «ՖՐԱՆՍԱՀԱՅԿԱԿԱՆ ԲԱՐԵԿԱՄՈՒԹՅԱՆ ՏՈՒՆ»

ԳԱՐԵԳԻՆ Ա ԿԱԹՈՂԻԿՈՍՆ ԸՆԴՈՒՆԵՑ ԱԼՖՈՐՎԻԼԻ ՔԱՂԱՔԱՊԵՏԻՆ

Հուլիսի 6-ին Նորին Սրբություն Գարեգին Ա Ամենայն Հայոց Կաթողիկոսն ընդունեց Ֆրանսիայի Ալֆորվիլ քաղաքից ժամանած 27 ֆրանսիացիներից և ֆրանսահայերից բաղկացած պատվիրակությանը՝ քաղաքապետ Պրն. Ռընե Ռուֆեի գլխավորությամբ: Հյուրերին ուղեկցում էին Արագածոտնի մարզպետ Պրն. Հրաչյա Գրիգորյանը և թեմի առաջնորդ Նավասարդ վրդ. Կնոյանը:

Պրն. Ռուֆեն իր և ներկաների անունից ողջույնի և երախտագիտության խոսք ասաց Նորին Սրբությանը՝ ընդունելության համար, և ներկայացրեց պատվիրակության անդամներին:

Ջերմ և մտերմիկ զրույցի ընթացքում Ալֆորվիլի քաղաքապետը պատմեց Արագածոտնի մարզում իրեն կողմից իրականացվելիք շինարարական աշխատանքների, մասնավորապես Օշականում կառուցվելիք «Ֆրանսահայկական Բարեկամության Տան» մասին, որի ուղղությամբ արդեն գործնական աշխատանքներ են տարվում: Տարածքը, որտեղ վեր կեսնի Բարեկամության տունը, տրամադրելու է Մայր Աթոռ Ս. Էջմիածինը, և շինարարական աշխատանքների ավարտից հետո այն իր հարկի տակ կհյուրընկալի մոտ 100 այցելուներ:

Գարեգին Ա Վեհափառ Հայրապետը գնահատանքի և շնորհակալության անկեղծ խոսքեր ուղղեց հյուրերին՝ հայ ժողովրդի նկատմամբ ցուցաբերած վերաբերմունքի համար, և իր Հայրապետական օրհնությունը տվեց նրանց:

Զրույցից հետո հյուրերը մեծ հետաքրքրությամբ ծանոթացան Վեհարանի և Գանձատան մշակութային և հոգևոր արժեքներին: Ապա, ի պատիվ մեծահարգ հյուրերի, Վեհարանի ճաշասրահում տրվեց հյուրասիրություն:

Հյուրասիրությունից հետո Գարեգին Ա Կաթողիկոսը և Գրն. Ռուբեն պատվիրակության անդամների հետ մեկնեցին Օշական՝ տեղում ծանոթանալու և նշտելու Բարեկամության տան կառուցմանը վերաբերող հարցերին:

ԸՆԴՈՒՆԵԼՈՒԹՅՈՒՆ Ս. ԷՋՄԻԱԾՆՈՒՄ՝ ՀԱՅ ԱՎԵՏԱՐԱՆԱԿԱՆ ԵԿԵՂԵՑՈՒ 150-ԱՄՅԱԿԻ ԱՌԹԻՎ

Կիրակի օրը, Հուլիսի 7-ին, Նորին Սրբություն Գարեգին Ա Ամենայն Հայոց Կաթողիկոսը Վեհարանի Հանդիսությունների դահլիճում ընդունեց Հայ Ավետարանական Եկեղեցու 150-ամյակի առիթով Հայաստան ժամանած պատվիրակության անդամներին՝ Հայ Ավետարանական Եկեղեցու ընդհանուր նախագահ Մովսես Ջամբազյանի գլխավորությամբ:

Վերապատվելի Մովսես Ջամբազյանը Վեհափառ Հայրապետին ներկայացրեց հյուրերին, որոնք ժամանել էին Ֆրանսիայից, Գերմանիայից, Անգլիայից և Միացյալ Նահանգներից, և տեղեկացրեց, որ մինչ Հայաստան գալը, Փարիզում, Կազմակերպությունը մեծ շուքով տոնել է իր հիմնադրության 150-ամյակը, և ներկա այցելությունը հայրենիք նույն նպատակն է հետապնդում՝ հոբելյանը նշել մայրենի հողում:

Նորին Սրբություն Գարեգին Ա Կաթողիկոսը, իր հայրապետական շնորհավորանքներն ու օրհնությունը տալով հյուրերին, ընդգծեց, որ Մայր Եկեղեցին նրանց ընդունում է որպես իր հարազատ զավակները, քանի որ այլևս չկա հակամարտության և մրցակցության նանապարհ, այլ կա մեկ առաքելության և միասնության ուղի: «Ուստի և պիտի աղոթեմ, որ դում զորանամ և մեր հոգևոր արժեքները տարածեմ հայ ժողովրդի մեջ՝ ներդաշնակաբար Հայաստանյայց Առաքելական Եկեղեցու և նրա Մայր Աթոռը հանդիսացող Ս. Էջմիածնի Ամենայն Հայոց Կաթողիկոսության հետ: Երկու Քրիստոս չկա, երկու Եկեղեցի չկա, այլ կան մեկ Եկեղեցու արտահայտության տարբեր եղանակները և մենք պարտավոր ենք ներդաշնակության մեջ պահել այդ առաքելությունը»:

Ավարտելով խոսքը, Վեհափառ Հայրապետը հյուրերին հանձնեց հուշանվերներ, որից հետո Վեհարանի ճաշասրահում տրվեց հյուրասիրություն:

Այդ օրը հյուրերը ներկա եղան Ս. Պատարագի արարողությանը, որի ընթացքում Վեհափառ Հայրապետը քարոզեց «Հունձք բազումք են և մշակք՝ սակաւք» բնաբանով: Նորին Սրբությունը հանգամանորեն ներկայացրեց առաքելության ավետարանական նշմարիտ ըմբռնումը՝ քրիստոնյա լինել, քրիստոնեաբար ապրել և քրիստոնեությունը կյանքով տարածել: Գնահատանքի խոսք ասաց Հայ Ավետարանական եկեղեցու 150 տարիների ընթացքում ծավալած գործունեության մասին՝ հոգևոր ավանդների մշակման, դպրոցական, դաստիարակչական և կրթական մարզերում, ինչպես նաև ընկերային ծառայության տեսակետից:

Երեկոյան ժամը 18.00-ին Երևանի ֆիլհարմոնիկ դահլիճում տեղի ունեցավ Հայ Ավետարանական եկեղեցու հիմնադրության 150-ամյակի հանդիսավոր արարողությունը, որին ներկա էր և մասնակիցներին իր պատգամը հղեց Նորին Սրբություն Գարեգին Ա Ամենայն Հայոց Կաթողիկոսը:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱԶԳԱՅԻՆ ԱԿԱԴԵՄԻԱՅԻ ԱՆԴԱՄՆԵՐԸ ՎԵՀԱՓԱՌ ՀԱՅՐԱՊԵՏԻՆ ՀՅՈՒՐ

Հինգշաբթի, հուլիսի 11-ին, Նորին Սրբություն Գարեգին Ա Վեհափառ Հայրապետի հրավերով, Մայր Աթոռ Ս. Էջմիածին էին այցելել Հայաստանի Հանրապետության Ազգային Ակադեմիայի նախագահության անդամները՝ Ակադեմիայի նախագահ Ֆադեյ Սարգսյանի գլխավորությամբ:

Երկարատև զրույցի ընթացքում ակադեմիկոս Ֆադեյ Սարգսյանը և նախագահության անդամները Նորին Սրբությանը ներկայացրեցին Ազգային Ակադեմիայի գործունեության ներկայիս ընթացքը, նրան հուզող խնդիրներն ու հիմնահարցերը և նաև՝ Հայաստանում գիտության ընդհանուր զարգացմանը նպատակամղված մշակված հեռանկարային ծրագրերը:

Գարեգին Ա Վեհափառ Հայրապետը, ուշադրությամբ լսելով գիտնականներին, ընդգծեց, որ Մայր Աթոռ Ս. Էջմիածինը միշտ էլ ուշի-ուշով և հետևել հանրապետության գիտական կյանքին և մեր օրերում ավելի է կարևորում գիտության, հատկապես հայագիտության վերելքը և Ազգային Ակադեմիայի մասնակցությունը մեր պետության ամրացման գործընթացին: Նորին Սրբությունը նշեց, որ տարիներ առաջ սկիզբ առած համագործակցությունը Մայր Աթոռի և Ազգային Ակադեմիայի միջև ապագայում ավելի կամրապնդվի, և այդ համագործակցության ընթացքում Մայր Աթոռը իր կարելի աջակցությունը կցուցաբերի Ազգային Ակադեմիային:

Գիտության զարգացման հիմնահարցերին վերաբերող զրույցը շարունակվեց նաև Վեհարանի նաշասրահում տրված հյուրասիրության ընթացքում:

ԱՅՑԵԼՈՒԹՅՈՒՆ ՄԱՅՐ ԱԹՈՌ Ս. ԷՋՄԻԱԾԻՆ

Հուլիսի 15-ին Նորին Սրբությունը Գարեգին Ա Ամենայն Հայոց Կաթողիկոսն ընդունեց Հայ Կաթողիկե եկեղեցու ուխտավորների խմբին՝ Հայաստանի Կաթողիկե եկեղեցու առաջնորդ Գերապայծառ Ներսես Արքեպս. Տեր-Ներսիսյանի գլխավորությամբ:

Գերապայծառ Ներսես Արքեպիսկոպոսը Վեհափառ Հայրապետին ներկայացրեց խմբի անդամներին՝ տեղեկացնելով, որ ուխտագնացությունը նվիրված է Կարդինալ Աղաջանյանի ծննդյան 100-ամյա հոբելյանին:

Նորին Սրբությունը, ողջունելով հյուրերին, նշեց, որ Մայր աթոռ Ս. Էջմիածինը Հայ Կաթողիկե եկեղեցին նկատում է որպես Հայ Առաքելական եկեղեցու հետ միասնաբար գործող և ֆայլող եկեղեցի: Միասնաբար պետք է կառուցենք մեր հայրենիքը, նրա զորացման, ժողովրդի հավատքի ամրացման համար չի կարող տարակարծություն լինել:

Գարեգին Ա Կաթողիկոսը նաև գնահատանքի բարձր խոսք ասաց Կարդինալ Աղաջանյանի հասցեին՝ նրան համարելով հայ ժողովրդի արժանավոր զավակներից մեկը:

Հանդիպման ավարտին Ներսես Արքեպս. Տեր-Ներսիսյանը Վեհափառ Հայրապետին նվիրեց Կարդինալ Աղաջանյանի հուշամեդալը:

ԻՐԱՆԻ ԻՍԼԱՄԱԿԱՆ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԴԵՍՊԱՆԸ Ս. ԷՋՄԻԱԾՆՈՒՄ

Հուլիսի 23-ին Նորին Սրբություն Գարեգին Ա Ամենայն Հայոց կաթողիկոսն ընդունեց Հայաստանի Հանրապետությունում Իրանի Իսլամական Հանրապետության արտակարգ և լիազոր դեսպան Համիդռեզա Նիֆֆար Էսֆահանիին:

Շուրջ մեկժամյա զրույցի ընթացքում խոսվեց հայ-իրանական հարաբերությունների մասին: Վեհափառ Հայրապետը բարձր գնահատեց երկու երկրների և ժողովուրդների միջև ընթացող այն ակտիվ համագործակցությունը, որ իրականանում է տնտեսական, առևտրական, ճարտարաշինական և մշակութային մարզերում: Նորին Սրբությունը ջերմ սիրով խոսեց իրանահայ ժողովրդի մասին և ընդգծեց այն խոր հարգանքն ու ակնածանքը, որ իրանահայ ժողովուրդը տածում է սրբություն սրբոց Մայր Աթոռ Ս. Էջմիածնի նկատմամբ:

«Այդ սերը և կապվածությունը, - ասաց Գարեգին Ա Վեհափառ Հայրապետը,- դարերով, հոգևոր հաղորդակցությամբ ամրացած զգացումն է մեր հարազատ ժողովրդի զավակների մեջ: Ցանկանում եմ նրանց ամենայն բարիք՝ Իրանի Իսլամական Հանրապետության հովանու ներքո»:

Հարգարժան դեսպանը իր հերթին ևս կարևորեց Հայաստանի և Իրանի միջև զարգացող հարաբերությունները և նշեց, որ դրանք օրեցօր ավելի են սերտանում:



ՀՕՄ-Ի ԺԱՄԲԱՐԻ ԵՐԵԽԱՆԵՐՆ ՍՏԱՑԱՆ ՎԵՀԱՓԱՌ ՀԱՅՐԱՊԵՏԻ ՕՐՀՆՈՒԹՅՈՒՆԸ

Հուլիսի 26-ին Վեհարանի հանդիսությունների մեծ դահլիճում Նորին Սրբություն Գարեգին Ա կաթողիկոսն ընդունեց ՀՕՄ-ի «Գուգարք» ճամբարի (ուր հիմնականում հանդատանում են զոհված ազատամարտիկների, ինչպես նաեւ սփյուռքահայ երեխաներ) 130 սաներին:

Ողջունելով փոքրիկ այցելուներին Վեհափառ Հայրապետը հայրական սիրով նրանց ներկայացրեց Մայր Աթոռ Ս. Էջմիածնի 17-դարյա պատմությունը՝ եւ ընդգծեց, որ այս սրբատեղին յուրաքանչյուր հայի հարազատ տունն է: «Ձեր այցելությամբ Ս. Էջմիածինը վերաթարմանում եւ վերանորոգվում է, իսկ ձեր հավատքը՝ վերածաղկում», ասաց Նորին Սրբությունը եւ պատգամեց երեխաներին պատասխանատվությամբ եւ նվիրումով շարունակել իրենց հայրերի գործը: Վեհափառ Հայրապետը նաեւ բարձր գնահատանքի խոսք ասաց ՀՕՄ-ի ծավալած բարեսիրական գործունեության մասին՝ սկսած Եղեռնի դաժան տարիներից մինչեւ մեր օրերը:

Խոսքի ավարտին, որպես հուշ այդ գեղեցիկ հանդիպման, Ամենայն Հայոց Հայրապետը երեխաներին նվիրեց փոքրիկ հուշանվերներ: Ապա երեխաները մեծ հետաքրքրությամբ ծանոթացան Գանձատան եւ Մայր Տաճարի թանգարանի հոգեւոր եւ մշակութային բարձրաժեք նմուշներին:

ՖՐԱՆՍԻԱՑԻ ԴԵՍՊԱՆՆ ԱՑՑԵԼԵՑ ԳԱՐԵԳԻՆ Ա ԿԱԹՈՂԻԿՈՍԻՆ

Հուլիսի 23-ի կեսօրին Մայր Աթոռ Ս. Էջմիածին այցելեց Հայաստանի Հանրապետությունում Ֆրանսիայի արտակարգ և լիազոր դեսպան Միշել Լեգրան: Սա պրն. Լեգրայի՝ Հայաստանում պաշտոնավարելու ընթացքում առաջին այցելությունն էր Մայր Աթոռ:

Վեհարանում հարգարժան հյուրին ընդունեց Նորին Սրբություն Գարեգին Ա Ամենայն Հայոց Կաթողիկոսը: Ֆրանսիայի դեսպանը իր խորը հարգանքն արտահայտեց Հայաստանյայց Առաքելական Եկեղեցու հոգևոր կենտրոն Մայր Աթոռ Ս. Էջմիածնի նկատմամբ և հավաստիացրեց, որ իր պաշտոնավարության շրջանում հարաբերությունները Ֆրանսիայի և Հայաստանի միջև առավել ևս կզարգանան:

Վեհափառ Հայրապետը, շնորհավորելով պրն. Լեգրային իր նոր պաշտոնավարության կապակցությամբ, հանգամանորեն խոսեց Մայր Աթոռի առաքելության մասին՝ հոգևոր դաստիարակչական, մշակութային և ընկերային ծառայության ոլորտներում:

Զրույցի նյութ դարձան նաև Մայր Աթոռի թանգարանների արդիական մեթոդներով վերակառուցման անհրաժեշտության, ինչպես նաև Մայր Աթոռի և Ֆրանսիայի Եկեղեցիների միջև էկումենական հարաբերությունների զարգացման հնարավորություններին առնչվող հարցերը:

ԱՍՈՒԼԻՍ ՄԱՅՐ ԱԹՈՌ Ս. ԷՋՄԻԱԾՆՈՒՄ

Օգոստոսի 22-ին Մայր Աթոռ Ս. Էջմիածնում տեղի ունեցավ մամլո ասուլիս: Նորին Սրբություն Գարեգին Ա Ամենայն Հայոց Կաթողիկոսը, պատասխանելով լրագրողների հարցերին, տեղեկություններ տվեց

առաջիկայում կայանալիք Մյուռոնօրհնության, նահատակ Խորեն Կաթողիկոս Մուրադբեկյանի աճյունի ի Մայր Տաճար տեղափոխության արարողությունների վերաբերյալ, ինչպես նաև մանրամասներ՝ Հարավային Ամերիկայի երկրներ կատարած իր հովվապետական ուղևորության մասին:

Նորին Սրբությունը նշեց, որ Մյուռոնօրհնեբը Հայ Առաքելական եկեղեցու կյանքում նշանակալից դեպք է, «ուխտի նման նվիրական մի արարք»: Այդ սրբազան արարողությանը ներկա կլինեն մեր եկեղեցու բոլոր թեմական առաջնորդները, բազմահազար ուխտավորներ՝ աշխարհի բոլոր ծագերից: Այն նշանավորվում է նաև նրանով, որ լինելու է իր՝ որպես Ամենայն Հայոց Կաթողիկոսի առաջին և 2-րդ հազարամյակի վերջին Մյուռոնօրհնությունը: Հաջորդ օրհնությունը նախատեսվում է կատարել 2001 թվականին, որը կլինի 3-րդ հազարամյակի առաջին Մյուռոնօրհնությունը և կհամընկնի մեր եկեղեցու 1700-ամյակի տոնակատարությանը:

Խոսելով սեպտեմբերի 7-ին կայանալիք Խորեն Կաթողիկոս Մուրադբեկյանի աճյունի տեղափոխության մասին, Վեհափառ Հայրապետը ասաց. «Քանի որ Մայր Աթոռում են գտնվելու Հայ եկեղեցու բոլոր թեմական առաջնորդները և կլինի համազգային և համաեկեղեցական ներկայություն, որոշեցինք օգտագործել այդ պատեհ առիթը և արժանին մատուցել մեր նահատակ Խորեն Կաթողիկոս Մուրադբեկյանի, որը զոհը եղավ համայնավար իշխանության բռնության, հիշատակին: Խորեն Մուրադբեկյան Կաթողիկոսի աճյունը Ս. Գայանե վանքից կտեղափոխվի և կամփոփվի Մայր Տաճարի մուտքի մոտ, ուր հանգչում են մեր մյուս երջանկահիշատակ Հայրապետները»:

Ապա Գարեգին Ա Վեհափառ Հայրապետը հանգամանորեն պատմեց Հարավային Ամերիկայի երկրներ կատարած իր անդրանիկ հովվապետական այցելության մասին՝ ներկայացնելով այնտեղի հայ գաղթօջախներում տիրող իրական վիճակը, թե ինչպես հայերը գաղթական և աքսորյալ վիճակից՝ իրենց չարքաշ աշխատանքով այժմ դարձել են այդ երկրների լիիրավ քաղաքացիներ և շահել իշխանությունների վստահությունն ու հարգանքը: «Ամեն մի հայ ինձի թվում էր մի վեպ, պատմություն», ասաց Նորին Սրբությունը: «Երբեմ պետությունների նախագահների հետ հանդիպումների ժամանակ, ինչպես և այլ պետական ներկայացուցիչներին այցելության ընթացքում մեծ հպարտությամբ լսեցի նրանց գովեստի խոսքերը մեր համայնքների մասին»: Շարունակելով խոսքը, Վեհափառ Հայրապետը գոհունակությամբ նշեց կրթական բավարար վիճակի, ազգային բարեբարների հայրենասիրական և բարեգործական ձեռնարկումների մասին:

Ի պատասխան «Որքանո՞վ է համապատասխանում իրականությանը՝ մեկ հայրենիք, մեկ ազգ և մեկ եկեղեցի կարգախոսը» հարցին Նորին Սրբությունը ընդգծեց, որ հայերը միշտ էլ եղել են մեկ ազգ, մեկ հայրենիք և մեկ եկեղեցի: Եղել են տարակարծություններ հայ ազգի ու եկեղեցու, հայրենիքի արտահայտման եղանակների շուրջ, «բայց այսօր

մենք մեկ ազգ, մեկ հայրենիք և մեկ եկեղեցի ենք: 1700-ամյակը մենք տոնելու ենք մեկ հանձնախմբով և ինչ որ պետք է արվի այդ կապակցությամբ, պետք է արվի մեկ եկեղեցու կողմից: Հեգտագա տարիների ընթացքում երկխոսությունների և բանակցությունների միջոցով Ս. Էջմիածնին կվերադարձվեն այն թեմերը, որոնք պատմականորեն պատկանել են Մայր Աթոռին»:

Ասուլիսի ընթացքում խոսվեց նաև նահատակ այլ հոգևորականների սրբադասման հարցի շուրջ: Այդ կապակցությամբ Նորին Սրբությունը նշեց, որ Հայ եկեղեցին կհոչակի սրբադասման հատուկ տարի և այդ առիթով կանցկացվեն քննարկումներ՝ որոշելու անհատների՞ն պետք է սրբադասման արժանացնել, թե՞ բոլոր նահատակներին միասին: Վեհափառ Հայրապետը տեղեկացրեց, որ այժմ, օգտագործելով պահպանված արխիվային նյութերը, հրատարակության են պատրաստվում գրքեր՝ նվիրված նահատակ հոգևորականների կյանքին ու գործունեությանը: Այդ հրատարակությունները կդառնան լավագույն դասագրքերը մեր ապագա սերնդի համար:

Զրույցի ավարտին, ի պատասխան լրագրողի այն հարցին, թե ինչպես է Վեհափառ Հայրապետը վերաբերում նախագահական ընտրություններին, Նորին Սրբությունն ընդգծեց, որ ողջունում է այն երևույթը, որ ներկայիս ընտրությունները տեղի են ունենում ազատ, ժողովրդավարական պայմաններում և վստահություն հայտնեց, որ դրանք կընթանան ընդունված օրենքին համապատասխան:

ՎՐԱՍՏԱՆԻ ՄՇԱԿՈՒՅԹԻ ՆԱԽԱՐԱՐԸ ԱՑՑԵԼԵՑ ՄԱՅՐ ԱԹՈՌ Ս. ԷՋՄԻԱԾԻՆ

Օգոստոսի 30-ին Մայր Աթոռ Ս. Էջմիածին այցելեց Վրաստանի Հանրապետության մշակույթի նախարար Վախթանգ Ասաթիանին: Վեհարանում հարգարժան հյուրին ընդունեց Նորին Սրբություն Գարեգին Ա Ամենայն Հայոց Կաթողիկոսը: Ջերմ ու անկեղծ զրույցի ընթացքում Վեհափառ Հայրապետը, անդրադառնալով հայ և վրացի ժողովուրդների դարերի խորքից եկող բարեկամությանը, նրանց պատմական հարուստ անցյալին, նշեց, որ պատմության տարեգրության մեջ մեր երկու ժողովուրդների եղբայրության շատ գեղեցիկ և հարուստ էջեր են գրվել և դեռ պիտի գրվեն: Սակայն սխալ է անցյալով մխիթարվել միայն: Ապավինելով անցյալին՝ պետք է վերանորոգել մեր բազմադարյա բարեկամությունը, գործակցաբար առաջ տանել պատմության անիվը: «Մենք ապրող, ապագային նայող ժողովուրդներ ենք, - ընդգծեց Նորին Սրբությունը, - և դեպի ապագան պետք է նայենք գործակցաբար, քանզի գործակցությունն է համերաշխության, ժողովուրդների առողջ փոխհարաբերությունների զարգացման գրավականը»:

Իր համերաշխությունն արտահայտելով Վեհափառ Հայրապետի

խոսքերին պրն. Ասաքիանին խոսեց հոգևոր ոլորտի բարփոխությունների մասին: Պրն. Ճախարարն ընդգծեց նաև, որ երկու ժողովուրդների բարեկամական հարաբերությունների զարգացման գործում իրենց մեծ ներդնումն ունեն հոգևոր առաջնորդները:

Վերջում փոխանակվեցին հուշանվերներ:

Հանդիպմանը ներկա էին Մայր Աթոռի դիվանապետ Ներսես արքեպս. Պոզապալյանը, Վրաստանի մշակութային գործիչներ:

ՄԱԿ-Ի ՆԵՐԿԱՅԱՑՈՒՑԻՉԸ ՄԱՅՐ ԱԹՈՌ Ս. ԷՋՄԻԱԾՆՈՒՄ

Օգոստոսի 31-ին Նորին Սրբություն Գարեգին Ա Ամենայն Հայոց Կաթ-ղիկոսն ընդունեց ՄԱԿ-ի Գլխավոր քարտուղարի տեղակալ, թմրադեղերի վերահսկման ծրագրի գործադիր տնօրեն Ջորջիո Ջիակոմելլիին և Եվրոպայի և Մերձավոր Արևելքի բաժնի պետ Բերնարդ Ֆրահիին:

Զրույցի ընթացքում Պրն. Ջիակոմելլին Վեհափառ Հայրապետին ծանոթացրեց իրենց ծավալած գործունեությանը: Վեհափառ Հայրապետը, ողջունելով գրասենյակի մարդասիրական ձեռնարկները, ընդգծեց, որ եկեղեցին ևս իր առաքելության մեջ կարևոր տեղ պետք է հատկացնի թմրամոլության դեմ պայքարին: Այդ պայքարի մեջ Նորին Սրբությունը կարևորեց նաև լրատվական զանգվածային միջոցների դերը՝ թմրամոլությունը կասեցնելու ուղիներից մեկը համարելով երիտասարդական կազմակերպությունների դրական աշխատանքի և գործունեության բաշխումը եկեղեցական, պետական իշխանության և մամուլի կողմից:

ՄԱՄԼՈ ԴԻՎԱՆ ՄԱՅՐ ԱԹՈՌԻ